«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐ

ԵՐԵՎԱՆ – 2024

Ֆիզիկական անձանց ընթացիկ բանկային հաշիվների բացման և սպասարկման սակագներ ու պայմաններ			
Գործառնության տեսակ			**Սակագնի չափ**
1.	Հաշվի բացման [1] վճար	Ռեզիդենտ հաճախորդների համար	Անվճար [2]
		Ոչ ռեզիդենտ հաճախորդների համար	15,000 ՀՀ դրամ [3]
2.	Հաշվի ամսական սպասարկման վճար		Անվճար [4]
3.	Հաշվի ժամկետ		Անժամկետ
4.	Հաշվի օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան անվանական տոկոսադրույքի չափ		0%
5.	Հաշվի փակում	Հաճախորդի դիմումի համաձայն	2,500 ՀՀ դրամ [5]
		Բանկի նախաձեռնությամբ, եթե ոչ ակտիվ հաճախորդի բոլոր հաշիվը/ները վերջին մեկ տարվա ընթացքում ունեն 0 (զրոյական) մնացորդ	Անվճար [6]
6.	Հաշվի նվազագույն մնացորդ		Չի սահմանվում
7.	Հաշվով գործարքների նվազագույն չափ		Չի սահմանվում
8.	Հաշվով գործարքների առավելագույն չափ		Չի սահմանվում
9.	Ոչ ակտիվ հաճախորդի [7] հաշվի/ների սպասարկման վճար		Հաշվի/ների ընդհանուր մնացորդը 2,500 ՀՀ դրամից կամ դրան համարժեք գումարից պակաս լինելու դեպքում՝ հաշվի մնացորդի չափով
			Հաշվի/ների ընդհանուր մնացորդը 2,500 ՀՀ դրամից կամ դրան համարժեք գումարից ավել լինելու դեպքում՝ 2,500 ՀՀ դրամ, իսկ 13-րդ ամսից սկսած հաջորդող չաշխատող ժամանակահատվածի համար՝ ամսական 1,000 ՀՀ դրամ:

Ֆիզիկական անձ հաճախորդների խնայողական հաշիվների (*այսուհետ նաև՝ Հաշիվ*) բացման և սպասարկման սակագներ ու պայմաններ					
Գործառնության տեսակ		**Սակագնի չափ**			
1.	Հաշվի արժույթ	**ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար/եվրո**			
2.	Հաշվի բացման[8] վճար	Անվճար			
3.	Հաշվի ամսական սպասարկման[9] վճար	Անվճար			
4.	Հաշվի ժամկետ	Անժամկետ			
5.	Հաշվի փակում[10]	Անվճար			
6.	Հաշվի նվազագույն մնացորդ	Չի սահմանվում			
7.	Հաշվի համալրման նվազագույն գումար	Չի սահմանվում			
8.	Հաշվով գործարքների նվազագույն չափ	Չի սահմանվում			
9.	Տարեկան պարզ (անվանական) տոկոսադրույք՝ ՀՀ դրամով հաշվարկվում է հաշվետու ամսվա համար հաշվի նվազագույն մնացորդի նկատմամբ [11, 12, 13]				
Տոկոսադրույք		ընթացիկ ամիս՝ R_1	վերջին 3 ամիս՝ R_3	վերջին 6 ամիս՝ R_6	վերջին 12 ամիս՝ R_{12}
9.1.	Օրվա ավարտի դրությամբ մնացորդը մեծ կամ հավասար է 50,000 ՀՀ դրամից	6%	7%	8%	9.5%
9.2.	Օրվա ավարտի դրությամբ մնացորդը փոքր է 50,000 ՀՀ դրամից	Բանկի սակագներով սահմանված բանկային հաշվի օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան տոկոսադրույք			
10.	Տարեկան պարզ (անվանական) տոկոսադրույք՝ արտարժութային հաշիվների համար				
10.1	Տարեկան անվանական տոկոսադրույք [14]	0%			
10.2	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	0%			
10.3	Տոկոսների հաշվարկման ձևը և հաճախականությունը	Տոկոսները հաշվարկվում են օրական՝ տվյալ օրվա Հաշվի մնացորդի նկատմամբ			
10.4	Տոկոսների վճարման ձև[15]	Տոկոսագումարները վճարվում են օրացուցային ամսվա վերջում՝ կապիտալացնելով Հաշվի մնացորդին			

1.	**Տեղեկատվական ծառայություններ**[16, 17]		
1.1.	Հաշվի մուտքի, ելքի և մնացորդի վերաբերյալ կարճ հաղորդագրության ուղարկում (*SMS ծանուցում, այդ թվում ավանդային և վարկային հաշիվների վերաբերյալ հիշեցումներ*)՝ յուրաքանչյուր հաղորդագրության համար		30 ՀՀ դրամ
1.2.	Վճարային փաստաթղթերի կրկնօրինակի տրամադրում՝		
	Թղթային տարբերակով պահպանվող տեղեկատվություն պարունակելու դեպքում՝	մինչև 1 տարի վաղեմության յուրաքանչյուր փաստաթղթի համար	3,000 ՀՀ դրամ
		1 տարուց ավելի վաղեմության յուրաքանչյուր փաստաթղթի համար	10,000 ՀՀ դրամ, մեկ հաճախորդից գանձվող առավելագույն գումար՝ 50,000 ՀՀ դրամ (մեկ գործառնական օրվա ընթացքում)
	Էլեկտրոնային տարբերակով պահպանված տեղեկատվություն պարունակելու դեպքում		1,500 ՀՀ դրամ
1.3.	Բանկի կողմից սահմանված ձևի **քաղվածքների** տրամադրում՝ ըստ ժամանակահատվածի	մինչև 1 ամիս կտրվածքով	անվճար
		1 ամսից մինչև 1 տարի կտրվածքով	2,000 ՀՀ դրամ
		1 տարուց ավելի ժամանկահատվածի համար	3,000 ՀՀ դրամ
1.4.	**Տեղեկանքների** տրամադրում [18]	Բանկի կողմից սահմանված ձևի **ստանդարտ** տեղեկանք	1,500 ՀՀ դրամ [19]
		Հաճախորդի պահանջով Բանկի կողմից սահմանված ստանդարտ ձևերից տարբերվող **ոչ ստանդարտ** տեղեկանք	5,000 ՀՀ դրամ
		Աուդիտորական հարցման պատասխանների պատրաստում և տրամադրում (բացառությամբ բանկերին)	15,000 ՀՀ դրամ
2.	**Հաշվով կատարվող գործառնությունների տեսակներ** [20]		
2.1.	Հաշվին գումարի համալրում	Կանխիկի մուտքագրում - տվյալ ծառայության համար Բանկի սահմանած սակագնով	
		Անկանխիկ՝ փոխանցումներ ստանալով միևնույն հաճախորդի հաշիվների միջև կամ այլ հաճախորդի հաշվից(նաև այլ բանկից) - տվյալ ծառայության համար Բանկի սահմանած սակագնով	
2.2.	Հաշվից գումարի ելքագրում	Կանխիկի ելքագրում - տվյալ ծառայության համար Բանկի սահմանած սակագնով	
		Անկանխիկ՝ փոխանցումներ ուղարկելով միևնույն հաճախորդի հաշիվների միջև կամ այլ հաճախորդի հաշվին(նաև այլ բանկ) - տվյալ ծառայության համար Բանկի սահմանած սակագնով	

---

[1] Հաշվի բացման վճար նախատեսված լինելու դեպքում վճարը գանձվում է յուրաքանչյուր հաշվի համար առանձին: ՀՀ դրամով հաշիվը պարտադիր է, ընդ որում, եթե Հաճախորդը միաժամանակ բացում է արտարժութային հաշիվ(ներ), ապա ՀՀ դրամով հաշվի բացումն անվճար է:

[2] Սույն կետի սակագինը սահմանվում է 200 ՀՀ դրամ, եթե հաշվի բացումը իրականացվել է Հաճախորդի կողմից Բանկի «Մոբայլ բանկային ծառայություն» կամ «Ինտերնետային բանկային ծառայություն» համակարգերից:

[3] Անկախ բացվող հաշիվների քանակից սահմանվում է լրացուցիչ 50,000 ՀՀ դրամ վճար, եթե Հաճախորդի նույնականացումը կատարվում է հեռավար՝ առանց հաճախորդի ֆիզկապես Բանկ այցելելու:

[4] Սպասարկման վճար նախատեսված լինելու դեպքում վճարը գանձվում է յուրաքանչյուր հաշվի համար առանձին՝ սկսած հաշվի բացման ամսվանից յուրաքանչուր ամսվա վերջին օրը:

[5] Վճար նախատեսված լինելու դեպքում վճարը գանձվում է յուրաքանչյուր հաշվի համար առանձին: Սույն կետի սակագինը սահմանվում է 0 ՀՀ դրամի չափով եթե հաշվի փակումը իրականացվել է Հաճախորդի կողմից Բանկի «Մոբայլ բանկային ծառայություն» կամ «Ինտերնետային բանկային ծառայություն» համակարգերից: 12 (տասներկու) և ավել ամսիների վաղեմությամբ հաշվի(ների) փակումը անվճար է:

[6] Եթե հաճախորդը ոչ ակտիվ է և նրա բոլոր հաշիվները վերջին մեկ տարվա (12 ամիսների) ընթացքում ունեն 0 (զրոյական) մնացորդ, ապա համարվում է, որ Բանկը հաճախորդին չի սպասարկել՝ ծառայություն չի մատուցել, և այդ ժամանակահատվածի համար հաճախորդից Հաշվի ամսական սպասարկման վճար՝ սպասարկման վճար նախատեսված լինելու դեպքում, չի գանձվում:

[7] Սույն պայմանների իմաստով ոչ ակտիվ է համարվում այն հաճախորդը, ով իր բոլոր հաշիվներով միաժամանակ գործառնություններ չի կատարել վերջին մեկ տարվա (12 ամիսների) ընթացքում, ընդ որում, սույն սահմանման իմաստով հաշվով գործառնությունների ներքո չեն ընդգրկվում Բանկի կողմից հաշվի սպասարկման վճարի կամ Բանկի առջև Հաճախորդի այլ պարտավորությունների դիմաց համապատասխան դրամական միջոցների գանձման (հաշվանցի), ինչպես նաև դատարանի վճռի հիման վրա հաշվի միջոցների բռնագանձման դեպքերը: Սույն կետով նախատեսված ոչ ակտիվ հաճախորդից վճարը չի գանձվում, եթե հաճախորդն ունի Բանկում ներդրված և գործող ավանդ կամ ունի ստացված և դեռևս չմարված վարկ:

[8] Խնայողական հաշիվը հնարավոր է բացել՝ այցելելով Բանկի ցանկացած մասնաճյուղ այդ թվում այն հասանելի է Բանկի կողմից շահագործվող առցանց ծրագրային Համակարգերից/Հավելվածներից(*Mobile Banking և/կամ Internet Banking*) օգտվող Հաճախորդների համար:

[9] Սպասարկման վճար նախատեսված լինելու դեպքում վճարը գանձվում է սկսած հաշվի բացման ամսվանից յուրաքանչուր ամսվա վերջին օրը:

[10] Խնայողական հաշիվը առանց հաճախորդի դիմումի կարող է փակվել Բանկի կողմից, եթե մեկ տարվա ընթացքում տվյալ հաշվով գործառնություններ չեն կատարվել և որոնք չունեն դրական մնացորդ:

[11] Տոկոսադրույքը կախված է հաշվին դրամական միջոցների գտնվելու ժամկետից և վերջին (*ժամկետի մեկնարկը սկսվում է սակագներով նախատեսված նվազագույն մնացորդը ապահովելու օրվանից*) 1, 3, 6 և 12 ամիսների նվազագույն մնացորդից, հետևաբար որքան երկար և շատ է կատարվում խնայողություն, այնքան բարձր է տոկոսադրույքը: Բանկը հաշվետու/տվյալ ամսվա նվազագույն մնացորդի համար հաշվարկված տոկոսագումարները հաշվեգրում և վճարում է օրացուցային ամսվա վերջում՝ կապիտալացնելով հաշվի մնացորդին, եթե այլ բան նախատեսված չի Բանկի ու Հաճախորդի միջև կնքված պայմանագրով, և վճարելիս պահում ու պետական բյուջե է փոխանցում օրենսդրությամբ գանձման ենթակա հարկերը: Օրացուցային ամսվա որևէ օրը մնացորդի զրոյական լինելու դեպքում, այդ օրացուցային ամսվա տոկոսները չեն հաշվեգրվում և չեն վճարվում:

[12] Խնայողական հաշվի տոկոսադրույքը չի ամրագրվում անժամկետ, այն կրում է տեղեկատվական բնույթ: Բանկն իրավունք ունի այն միակողմանիորեն փոփոխել՝ դրանք ուժի մեջ մտնելուց առնվազն 7 օր առաջ տեղեկացնելով հաշվետիրոջը՝ համապատասխան տեղեկատվությունը Բանկի կորպորատիվ կայքէջում հրապարակելու միջոցով:

[13] Ընթացիկ/հաշվետու օրացուցային ամսվա ամփոփ տոկոսադրույքը, որը կստանա հաճախորդը հաշվարկվում և կախված է վերջին 1,3,6,12 ամիսների նվազագույն մնացորդից և հաշվին միջոցների գտնվելու ժամկետից, որը հաշվարկվում է ստորև բանաձևով: Բանաձևի մեջ հաշվի են առնվում վերջին 1,3,6,12 ամիսների նվազագույն մնացորդները և 9-րդ կետով սահմանված տոկոսադրույքները:

$$R\% = \frac{\max(S_{12} * R_{12}; S_6 * R_6; S_3 * R_3; S_1 * R_1) * 100}{S_1}$$

$$G = \frac{S_1 * R * K}{365(366)} \qquad Տոկոսագումար(G) = \frac{նվազագույն\ գումարը\ հաշվետու\ ամսում * R\% * օրերի\ քանակը\ հաշվետու\ ամսում}{365/(366)})$$

R – ամփոփ տարեկան տոկոսադրույքն է, որով իրականացվում է հաշվետու ամսվա տոկոսների հաշվեգրումը և վճարումը
S_n – n վերջին ամիսների նվազագույն մնացորդը (n = 1,3,6,12 ամս.)
R_n – n ժամանակահատվածի տոկոսադրույքը (n = 1,3,6,12 ամս.)
G – հաշվետու ամսում հաշվեգրված տոկոսագումար
K – օրերի քանակը հաշվետու ամսում
S_1 –նվազագույն գումարը հաշվետու ամսում

[14] Խնայողական հաշվի տոկոսադրույքը չի ամրագրվում անժամկետ, այն կրում է տեղեկատվական բնույթ: Բանկն իրավունք ունի այն միակողմանիորեն փոփոխել՝ դրանք ուժի մեջ մտնելուց առնվազն 7 օր առաջ տեղեկացնելով հաշվետիրոջը՝ համապատասխան տեղեկատվությունը Բանկի կորպորատիվ կայքէջում հրապարակելու միջոցով:

[15] Տոկոսագումարները վճարելիս պահվում և պետական բյուջե է փոխանցվում օրենսդրությամբ գանձման ենթակա հարկերը:

[16] Թվարկված տեղեկատվական ծառայություններից Բանկի հաճախորդներին տրամադրման ենթակա չեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանության ժամկետը լրացած փաստաթղթերը և/կամ տեղեկատվությունը:

[17] Սակագները ներառում են ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ):

[18] Սույն կետով սահմանված սակագները կիրառելի են նաև ոչ հաշվետեր հաճախորդների համար:

[19] Սույն կետի սակագինը սահմանվում է 1,000 ՀՀ դրամի չափով եթե տեղեկանքը ձևավորվում է հաճախորդի կողմից Բանկի «Մոբայլ բանկային ծառայություն» կամ «Ինտերնետային բանկային ծառայություն» համակարգերից:

[20] Սույն սակագներով չկարգավորվող դրույթները կարգավորվում են Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագներով, իսկ այն միջնորդավճարներ, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ:

Ֆիզիկական անձ հաճախորդների բանկային փոխանցումների և վճարումների սակագներ ու պայմաններ					
	Արժույթ	**ՀՀ դրամ**	**USD**	**EUR**	**RUB**
1. Գործարքներ [1]					
1.1	**Փոխանցումներ, այդ թվում՝**				
Բանկ այցելելով կամ Հեռախոսային բանկային ծառայության միջոցով					
1.1.1	**ՀՀ տարածքում**				
1.1.1.1	Ներբանկային (միջմասնաճյուղային) փոխանցումներ հաշվից	0	0	0	0
1.1.1.2	Ներբանկային (միջմասնաճյուղային) փոխանցումներ առանց հաշվի մինչև 100,000 ՀՀ դրամ (նաև համարժեք արտարժույթ)	100 ՀՀ դրամ			
1.1.1.3	Ներբանկային (միջմասնաճյուղային) փոխանցումներ առանց հաշվի 100,000 ՀՀ դրամից ավել (նաև համարժեք արտարժույթ)	300 ՀՀ դրամ			
1.1.1.4	Միջբանկային փոխանցումներ բանկային հաշվից	100 ՀՀ դրամ	0,1% min 2,000 max 20,000 ՀՀ դրամ		Ծառայությունը հասանելի չէ
1.1.1.5	Միջբանկային փոխանցումներ առանց բանկային հաշվի	0,1% min 300 max 5,000 ՀՀ դրամ	0,1% min 3,000 max 20,000 ՀՀ դրամ		
1.1.1.6	1.1.1.4 և 1.1.1.5 կետերի փոխանցումներ՝ 50,000 և ավելի USD/EUR դեպքում	Կիրառելի չէ	0.25%		
1.1.2	**ՀՀ տարածքից դուրս[2, 3] – Ռեզիդենտ հաճախորդների համար**				
1.1.2.1	Եթե թղթակից բանկի ծախսերը կրում է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն, իսկ բոլոր միջնորդ բանկերի ծախսերը (առկայության դեպքում) գանձվում են փոխանցվող գումարից (ծախսերի **OUR** տարբերակ)[4]	0	0.15% min 10,000 max 60,000 ՀՀ դրամ		2,300 ՀՀ դրամ
1.1.2.2	Եթե թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից (ծախսերի **SHA** տարբերակ)[5]	Ծառայությունը հասանելի չէ	0.15%, min 7,000 max 25,000 ՀՀ դրամ		Ծառայությունը հասանելի չէ
1.1.2.3	Եթե թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը կրում է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն՝ գումարն ամբողջությամբ (առանց նվազեցումների) փոխանցելով ստացողին (ծախսերի **GOUR** տարբերակ)	Ծառայությունը հասանելի չէ	Ծախսերի OUR տարբերակ + 10,000 ՀՀ դրամ	Ծառայությունը հասանելի չէ	Ծառայությունը հասանելի չէ
1.1.2*	**ՀՀ տարածքից դուրս [2, 3] – Ոչ ռեզիդենտ հաճախորդների համար**				
1.1.2.1*	Եթե թղթակից բանկի ծախսերը կրում է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն, իսկ բոլոր միջնորդ բանկերի ծախսերը (առկայության դեպքում) գանձվում են փոխանցվող գումարից (ծախսերի **OUR** տարբերակ)[4]	0	2%, min 15,000 ՀՀ դրամ		2,300 ՀՀ դրամ
1.1.2.2*	Եթե թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից (ծախսերի **SHA** տարբերակ)[5]	Ծառայությունը հասանելի չէ	2%, min 10,000 ՀՀ դրամ		Ծառայությունը հասանելի չէ
1.1.2.3*	Եթե թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը կրում է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն՝ գումարն ամբողջությամբ (առանց նվազեցումների) փոխանցելով ստացողին (ծախսերի **GOUR** տարբերակ)	Ծառայությունը հասանելի չէ	Ծախսերի OUR տարբերակ + 10,000 ՀՀ դրամ	Ծառայությունը հասանելի չէ	Ծառայությունը հասանելի չէ
Internet բանկային կամ Mobile բանկային ծառայության միջոցով					
1.1.1	**ՀՀ տարածքում**				
1.1.1.1	Ներբանկային (միջմասնաճյուղային) փոխանցումներ բանկային հաշվից	0	0	0	0

1.1.1.2	Միջբանկային փոխանցումներ ՀՀ տարածքում բանկային հաշվից	0	0.1% min 1,500 max 20,000 ՀՀ դրամ		Ծառայությունը հասանելի չէ
1.1.1.3	1.1.1.2 կետի փոխանցումներ՝ 50,000 և ավելի USD/EUR դեպքում	Կիրառելի չէ	0.25%		
1.1.2	**ՀՀ տարածքից դուրս [2, 3] – Ռեզիդենտ հաճախորդների համար**				
1.1.2.1	Եթե թղթակից բանկի ծախսերը կրում է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն, իսկ բոլոր միջնորդ բանկերի ծախսերը (առկայության դեպքում) գանձվում են փոխանցվող գումարից (ծախսերի **OUR** տարբերակ)[4]	0	0.15% min 7,000 max 50,000 ՀՀ դրամ		2,300 ՀՀ դրամ
1.1.2.2	Եթե թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից (ծախսերի **SHA** տարբերակ)[5]	Ծառայությունը հասանելի չէ	0.15%, min 5,000 max 25,000 ՀՀ դրամ		Ծառայությունը հասանելի չէ
1.1.2.3	Եթե թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը կրում է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն՝ գումարն ամբողջությամբ (առանց նվազեցումների) փոխանցելով ստացողին (ծախսերի GOUR տարբերակ)	Ծառայությունը հասանելի չէ	Ծախսերի OUR տարբերակ + 10,000 ՀՀ դրամ	Ծառայությունը հասանելի չէ	Ծառայությունը հասանելի չէ
1.1.2*	**ՀՀ տարածքից դուրս [2, 3] – Ոչ ռեզիդենտ հաճախորդների համար**				
1.1.2.1*	Եթե թղթակից բանկի ծախսերը կրում է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն, իսկ բոլոր միջնորդ բանկերի ծախսերը (առկայության դեպքում) գանձվում են փոխանցվող գումարից (ծախսերի **OUR** տարբերակ)[4]	0	2%, min 9,000 ՀՀ դրամ		2,300 ՀՀ դրամ
1.1.2.2*	Եթե թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը գանձվում են փոխանցվող գումարից (ծախսերի **SHA** տարբերակ)[5]	Ծառայությունը հասանելի չէ	2%, min 7,000 ՀՀ դրամ		Ծառայությունը հասանելի չէ
1.1.2.3*	Եթե թղթակից և բոլոր միջնորդ բանկերի ծախսերը կրում է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն՝ գումարն ամբողջությամբ (առանց նվազեցումների) փոխանցելով ստացողին (ծախսերի **GOUR** տարբերակ)	Ծառայությունը հասանելի չէ	Ծախսերի OUR տարբերակ + 10,000 ՀՀ դրամ	Ծառայությունը հասանելի չէ	Ծառայությունը հասանելի չէ
1.2	**Վճարումներ, այդ թվում՝**				
Մասնաճյուղի կամ Հեռախոսային ծառայության միջոցով					
1.2.1.1	Կոմունալ և այլ վճարումներ բանկային հաշվից	0	0	0	0
1.2.1.2	Կոմունալ և այլ վճարումներ առանց բանկային հաշվի	0	0	0	0
1.2.1.3	Վճարումներ պետ. բյուջե բանկային հաշվից	100 ՀՀ դրամ	Ծառայությունը հասանելի չէ		
1.2.1.4	Վճարումներ պետ. բյուջե առանց բանկային հաշվի	0,1% min 300 max 5,000 ՀՀ դրամ	Ծառայությունը հասանելի չէ		
Internet բանկային կամ Mobile բանկային ծառայության միջոցով					
1.2.1.1	Կոմունալ և այլ վճարումներ բանկային հաշվից	0	0	0	0
1.2.1.2	Վճարումներ պետ. բյուջե բանկային հաշվից	0	Ծառայությունը հասանելի չէ		
1.3	**Շտապ փոխանցումներ[6]**				
1.3.1.1	Բանկ այցելելով կամ Հեռախոսային բանկային ծառայության միջոցով	Տվյալ փոխանցման համար նախատեսված սակագնին + 2,000 ՀՀ դրամ			
1.3.1.2	Internet բանկային ծառայության միջոցով				
1.4	**Փոխանցումների տվյալների փոփոխություն, ներառյալ՝ հետ կանչ կամ չեղյալ համարում[7]**				
1.4.1.1	Ներբանկային (միջմասնաճյուղային) փոխանցումներ	1,000 ՀՀ դրամ			
1.4.1.2	Միջբանկային փոխանցումներ ՀՀ տարածքում	2,000 ՀՀ դրամ			
1.4.1.3	Փոխանցումներ ՀՀ տարածքից դուրս և արտերկից ստացված՝				
1.4.1.3.1	Հաճախորդի դիմումի համաձայն	Ծառայությունը հասանելի չէ	25,000 ՀՀ դրամ		

1.4.1.3.2	Թղթակից բանկերից ստացված վավերապայմանների ճշգրտման հիման վրա փոխանցման վճարում շահառուին [8]	Ծառայությունը հասանելի չէ	5,000 ՀՀ դրամ	
1.4.1.3.3	Թղթակից բանկերից ստացված փոխանցումների հետ վերադարձ [8]	Ծառայությունը հասանելի չէ	10,000 ՀՀ դրամ՝ բայց ոչ ավել քան փոխանցված գումարը	
1.5	**Փոխանցումների որոնում, փոխանցման կարգավիճակի ստուգում**	7,500 ՀՀ դրամ		
1.6	Պարբերական վճարման հանձնարարականի կազմում[9]	0		
1.7	**ՀՀ տարածքից դուրս** 3 մլն. և ավելի ՌԴ ռուբլով միջբանկային փոխանցումների ուղարկում	Կիրառելի չէ		0,15% max 80,000 ՀՀ դրամ
1.8	Հայկական բանկերից ներքին՝ ՀՀ տարածքից միջբանկային փոխանցումների ստացում – 50,000 կամ ավելի USD կամ EUR դեպքում	Կիրառելի չէ	0.25%	Կիրառելի չէ
1.9	Փոխանցումները հավաստող հաղորդագրության, փաստաթղթի կրկնօրինակի տրամադրում	3,000 ՀՀ դրամ		

2. Գործարքների սահմանափակումներ և ժամկետներ			
2.1 Փոխանցման ժամկետներ, այդ թվում՝			Կատարման ժամկետ[10, 11, 12]
2.1.1	Միջբանկային	Բանկ այցելելով	Մինչև 15:00 տրված հանձնարարականների դեպքում միևնույն գործառնական օրվա ընթացքում, 15:00-ից հետո տրված հանձնարարականների դեպքում առավելագույնը մինչև հաջորդ գործառնական օրվա ավարտը
		Ինտերնետային բանկային ծառայության, մոբայլ բանկային կամ հեռախոսային բանկային ծառայության միջոցով	
2.1.2	Ներբանկային	Բանկ այցելելով	Մինչև 16:45 տրված հանձնարարականների դեպքում միևնույն գործառնական օրվա ընթացքում առավելագույնը 10 րոպեի ընթացքում, 16:45-ից հետո տրված հանձնարարականների դեպքում առավելագույնը մինչև հաջորդ գործառնական օրվա ավարտը
		Ինտերնետային բանկային ծառայության, մոբայլ բանկային կամ հեռախոսային բանկային ծառայության միջոցով	Մինչև 19:00 տրված հանձնարարականների դեպքում միևնույն գործառնական օրվա ընթացքում առավելագույնը 10 րոպեի ընթացքում, 19:00-ից հետո տրված հանձնարարականների դեպքում առավելագույնը մինչև հաջորդ գործառնական օրվա ավարտը
2.2 Պետ. բյուջե կատարվող վճարների ժամկետներ, այդ թվում՝			Կատարման ժամկետ
2.2.1	Բանկ այցելելով		Մինչև 15:00 տրված հանձնարարականների դեպքում միևնույն գործառնական օրվա ընթացքում առավելագույնը 10 րոպեի ընթացքում, 15:00-ից հետո տրված հանձնարարականների դեպքում առավելագույնը մինչև հաջորդ գործառնական օրվա ավարտը
2.2.2	Ինտերնետային բանկային ծառայության, մոբայլ բանկային կամ հեռախոսային բանկային ծառայության միջոցով		
2.3 Շտապ փոխանցումներ, այդ թվում՝			Կատարման ժամկետ
2.3.1	Բանկ այցելելով		Մինչև 15:00 տրված հանձնարարականների դեպքում միևնույն գործառնական օրվա ընթացքում, 15:00-ից հետո ձևավորված շտապ փոխանցումներն իրականացվում են հաջորդ գործառնական օրը՝ 2 աշխատանքային ժամվա ընթացքում
2.3.2	Ինտերնետային բանկային ծառայության, մոբայլ բանկային կամ հեռախոսային բանկային ծառայության միջոցով		

[1] Արտարժույթի գումարի նկատմամբ տոկոսներով արտահայտված միջնորդավճարները գանձվում են ՀՀ դրամով: Ընդ որում, Սակագներով սահմանված միջնորդավճարները առաջնահերթ գանձվում են Հաճախորդի ՀՀ դրամով հաշվից/ներից, իսկ հաշիվներին ՀՀ դրամով բավարար միջոցներ չլինելու դեպքում, Արդշինինվեստբանկն(այսուհետ նաև՝ Բանկ) իրավունք ունի միջնորդավճարի գումարը կամ դրա մի մասը փոխարկել արտարժույթով ունեցած միջոցներից՝ հաշվարկման համար կիրառելով տվյալ արժույթի ՀՀ Կենտրոնական Բանկի միջին փոխարժեքը:

[2] Անհրաժեշտություն դեպքում, Բանկը կարող է ինքնուրույն, առանց հաճախորդի նախնական համաձայնության, ընտրել կամ փոխել միջնորդ բանկին, եթե հաճախորդի կողմից ներկայացված վճարման հանձնարարականում նշված է որևիցէ այլ միջնորդ բանկ: Կախված միջնորդ բանկերի քանակից՝ հնարավոր է, որ գումարը շահառուին (ստացողին) հասնի որոշակի նվազեցումներով:

[3] Փոխանցումները իրականացվում են և բանկային հաշվից և առանց հաշվի կիրառման: Ընդ որում, առանց հաշվի կարելի է իրականացնել մինչև 20(քսան) մլն. ՀՀ դրամին համարժեք արտարժույթի չափով փոխանցումներ՝ ներկայացնելով ՌԴ կամ ՀՀ անձնագիր (նույնականացման քարտ):

[4] Բանկում գնանշվող այլ արտարժույթներով (բացառությամբ EUR և RUB) փոխանցումների համար սակագինը համընկնում է USD արժույթի սակագնի հետ:

[5] Բանկում գնանշվող այլ արտարժույթներով (բացառությամբ RUB) փոխանցումների համար սակագինը համընկնում է USD/EUR արժույթի սակագնի հետ, իսկ չգնանշվող արտարժույթներով գումարի փոխանցման համար սակագինը հետևյալն է 0.25% min 18,000 ՀՀ դրամ max 100,000 ՀՀ դրամ

[6] Շտապ փոխանցումները իրականացվում են միայն ՀՀ տարածքում:

[7] Հաճախորդի դիմումի համաձայն վճարման հանձնարարականի տվյալների փոփոխումը և չեղյալ համարումը նախքան Բանկի կողմից փոխանցման փաստացի կատարումը իրականացվում է անվճար: Վճարման հանձնարարականի չեղյալ համարումը իրականացվում է օրենքով սահմանված կարգով: Եթե փոխանցված միջոցներն արդեն վճարված են շահառուին, ապա Բանկը պատասխանատվություն չի կրում գումարների վերադարձման համար:

[8] Միջնորդավճարը գանձվում է փոխանցված գումարից:

[9] Սակագինը վերաբերվում է միայն պարբերական վճարման հանձնարարականի կազմմանը, փոխանցումները կատարվում են համաձայն տվյալ փոխանցման տեսակի համար սահմանված սակագնի:

[10] Բանկ այցելելով հանձնարարականները տրվում են գործառնական օրվա ընթացքում մասնաճյուղի աշխատանքային գրաֆիկին համապատասխան, իսկ ինտերնետ, մոբայլ կամ հեռախոսային-բանկ համակարգով՝ շուրջօրյա:

[11] Ժամկետը վերաբերում է Բանկի կողմից գործարքի կատարմանը:

[12] Գործառնական օրերն են շաբաթվա երկուշաբթիից մինչև ուրբաթ՝ աշխատանքային օրերը:

**ՀՀ կառավարության կողմից հաստատված ցանկում ընդգրկվող օֆշորային տարածքներում գրանցված ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար սահմանված են հատուկ սակագներ:*

***Բանկը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև գործարքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կասկածելի դիտարկվելու դեպքում, իրավունք ունի կասեցնել գործարքը կամ հրաժարվել դրանք կատարելուց (այդ թվում՝ մերժել հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելը):*

****ՀՀ տարածքում միջբանկային փոխանցումները հաշվից կատարվում են անվճար, եթե դրանք կատարավում են Բանկի կողմից տրված վարկային միջոցները Բանկի հետ կնքված վարկային պայմանագրով սահմանված նպատակի ուղղությամբ փոխանցելու համար:*

Ֆիզիկական անձանց կանխիկով գործառնությունների տեսակներն ու սակագները	
Գործողության տեսակ	**Սակագնի չափ**
Ելքագրման սակագին (%)	
Կանխիկ մուտքագրված միջոցների սահմաններում[1]	• ՀՀ դրամի դեպքում անվճար • արտարժույթի դեպքում՝ մինչև 02.12.2024թ.-ը կանխիկով մուտքագրված միջոցների կանխիկացում՝ USD և EUR անվճար[2], իսկ այլ արժույթներով՝ 3% ○ 02.12.2024թ.-ից հետո մուտքագրված հանրագումարով մինչև USD 300,000 համարժեք գումարի չափով անվճար ○ իսկ վերը նշված հանրագումարից ավելի դեպքում– 0.75%
Մնացած դեպքերում	
ՀՀ դրամ	0.3
USD	1.0
EUR	1.0
RUB	0.5
GBP	1.0
CHF	1.0

Մուտքագրման սակագին (%)	
USD	0.0
EUR	0.0
RUB	1.5
GBP	1.0
CHF	1.0

Հնամաշ և վնասված	
ՀՀ դրամների փոխանակում*	անվճար
արտարժույթի փոխանակում**	3.0%

*Ծառայությունը տրամադրվում է Արդշինինվեստբանկի հաճախորդներին:
**Ոչ հաշվետեր հաճախորդներին ծառայությունը տրամադրվում է միայն արտարժույթի փոխանակման գործարք իրականացնելիս (արտարժույթի փոխանակման օրական առավելագույն սահմանաչափ՝ 400 000 ՀՀ դրամ):

Օտարերկրյա դրամանիշերի տեսակավորված, շրջանառությունից հանված կամ հնամաշի հատկանիշներով թղթադրամների մուտքագրման/հաշվի համալրման, փոխարկման կամ այլ գործարքների սակագին***	
1996-2006թթ. սերիայի թողարկված USD թղթադրամների՝ հաշվին մուտքագրում/հաշվի համալրում, փոխարկում կամ այլ գործարք	0.5%
EUR 500 անվանական արժեքի թղթադրամների՝ հաշվին մուտքագրում/հաշվի համալրում, փոխարկում կամ այլ գործարք	1.5%
USD, EUR, RUB, CHF, GBP դրամանիշների հնամաշի հատկանիշներով թղթադրամների՝ հաշվին մուտքագրում/հաշվի համալրում, փոխարկում կամ այլ գործարք	3.0%
Շրջանառությունից հանված (20 տարվա վաղեմության) CHF, GBP թղթադրամների՝ հաշվին մուտքագրում/հաշվի համալրում, փոխարկում կամ այլ գործարք	3.0%

*** Եթե թղթադրամը համընկնում է մեկից ավելի տեսակներով, ապա կիրառվում է բարձր տոկոսով սակագինը

[1] Կանխիկ է համարվում նաև հաճախորդի ավանդների և պարտատոմսերի դիմաց հաշվեգրված տոկոսագումարները:

[2] Տվյալ սակագինը կիրառելի է վարկերի գումարների կանխիկացումների դեպքում: Տվյալ սակագինը կիրառելի չէ արտարժույթի փոխարկման գործարքների գումարների (այդ թվում՝ մինչև 2023թ. օգոստոսի 18-ը կատարված փոխարկումների) և ավանդների տոկոսագումարների կանխիկացման դեպքում: Կանխիկ են համարվում 91 օր և ավել պայմանագրային ժամկետով այն ավանդների մայր գումարները, որոնք չեն դադարեցվել մինչև պայմանագրային ժամկետի ավարտը, ինչպես նաև ավելի կարճ պայմանագրային ժամկետով այն ավանդների մայր գումարները, որոնք անընդմեջ վերակնքվել են որպես ավանդ 91 օր և ավել ժամանակահատվածում:

Մետաղադրամներ հաշվելու, ընդունելու և փոխանակելու համար սահմանված սակագներ	
Ծառայության տեսակը	**Սակագին**
Հաշվետեր հանդիսացող հաճախորդներից ՀՀ մետաղադրամների հաշվում և/կամ փոխանակում և/կամ ընդունում	Անվճար
Հաշվետեր չհանդիսացող հաճախորդներից ՀՀ մետաղադրամների հաշվում և/կամ փոխանակում և/կամ ընդունում	Յուրաքանչյուր դրամանիշից մինչև 50-ական հատ ներառյալ՝ անվճար Յուրաքանչյուր դրամանիշից 50-ական հատից ավելի դեպքում՝ նշված քանակը գերազանցող մասի 1.0%, նվազագույնը 1,000 ՀՀ դրամ

Վարկի(երի) մարման վճարների ընդունման եղանակներ		
Վճարման եղանակ		**Սակագին**
1.	Վարկի ուղղիղ մարում Բանկի դրամարկղից	
1.1	Մինչև 200,000 ՀՀ դրամ (կամ համարժեք արտարժույթ) կանխիկ դրամական միջոցների մուտքագրում բանկի դրամարկղից *	0.5%, նվզ. 100 ՀՀ դրամ, առվ. 300 ՀՀ դրամ
1.2	200,000 ՀՀ դրամից (կամ համարժեք արտարժույթից) ավել կանխիկ դրամական միջոցների մուտքագրում	անվճար
2.	Վարկի մարում Բանկին պատկանող (*Բանկի տարածքում գտնվող*) ինքնասպասարկման սարքերից, այդ թվում Բանկի մոբայլ հավելվածով	անվճար
3.	Վարկի մարում հաշիվներից (*ինքնաշխատ մարումներ*), այդ թվում մոբայլ բանկային ծառայության փոխանցումով	անվճար
** սույն սակագինը կիրառելի չէ և սահմանվում է 0 (զրո) ՀՀ դրամ Բանկին պատկանող ինքնասպասարկման սարքերի խափանման կամ այդ սարքերից վարկի մարման ծառայության անհասանելիության դեպքում և ընթացքում, ինչպես նաև ինքնասպասարկման սարքերով չհամալրված Բանկի մասնաճյուղերի համար:*		

Նոտարական կարգով և նոտարի վավերացված լիազորագրերին հավասարեցված լիազորագրերի ստուգման սակագներ				
Լիազորագրի տեսակ		Սակագին*		
		Ռեզիդենտ	Ոչ ռեզիդենտ	STATUS հաճախորդ - լիազորող
1.	Բանկի տարածքում լիազորագրի ձևակերպումը և հաշվի տվյալների համապատասխան սահմանում/փոփոխում	3,000 ՀՀ դրամ	15,000 ՀՀ դրամ	Անվճար
2.	Նոտարական կարգով կամ նոտարի վավերացված լիազորագրին հավասարեցված լիազորագրի ստուգում	Անվճար	Անվճար	Անվճար
* Սակագները ներառում են ավելացված արժեքի հարկը:				

Պահատուփերի վարձակալության և սպասարկման պայմաններ *			
Դրույքաչափ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ			
Պահատվության ժամկետը	Փոքր	Միջին	Մեծ
1-7 օր	3,000	4,000	5,000
8-14 օր	5,000	6,000	7,000
15-30 օր	7,500	8,500	9,500
31-90 օր	15,000	18,000	20,000
91-180 օր	22,000	25,000	30,000
181-270 օր	25,000	28,000	32,000
271-365 օր	29,000	33,000	39,000

Այլ պայմաններ

1. Ծառայությունը մատուցվում է հաշվետեր հաճախորդներին՝ անհատական պահատեղերով կահավորված մասնաճյուղերում:

2. Հաճախորդի կողմից անհատական պահատեղի բանալու կորստի հետևանքով բանալու կրկնօրինակի պատրաստման կամ անհատական պահատեղի վերանորոգման համար Բանկի կրած ծախսերը հատուցում է հաճախորդը, ընդ որում.
   - Հաճախորդին տրամադրված բանալին կորցնելու դեպքում գանձվում է 15,000 ՀՀ դրամ:

3. Վարձակալության պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտից հետո անհատական պահատեղը հաճախորդի կողմից չազատելու դեպքում վարձակալության պայմանագիրը շարունակում է գործել՝ Բանկի կողմից յուրաքանչյուր անգամ անակցեպտ երկարաձգվելով սկզբնական պայմանագրի ժամկետով: Ընդ որում, երկարաձգման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար հաճախորդի հաշվից(ներից) գանձվում է վճար՝ երկարաձգման օրվա դրությամբ հրապարակված սակագնին համապատասխան: Նշված եղանակով երկարաձգումները կատարվում են այնքան մինչև հաճախորդի հաշվին(ներին) առկա գումարը բավարարում է սակագինը գանձելու համար, հակառակ դեպքում ոչ ավել քան 1(մեկ) տարի:

4. Բանկը սույն պայմանների 2-րդ և 3-րդ կետով նախատեսված ծախսերը անակցեպտ կերպով գանձում է Հաճախորդի հաշվում(ներում) առկա դրամական միջոցներից՝ անհրաժեշտության դեպքում կատարելով արժույթների փոխարկում Բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

5. Սույն պայմանների 3-րդ կետով նախատեսված 1(մեկ) տարին լրանալուց հետո հաճախորդի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից անհատական պահատեղը չազատելու դեպքում Բանկը իրեն իրավունք է վերապահում առանց հաճախորդի ներկայության և/կամ լրացուցիչ թույլտվության բացելու պահատեղը, պահատեղում արժեքների առկայության դեպքում դրանք գույքագրել և տեղափոխել ի պահ ընդհանուր դրամապահոց:

* Ոչ ռեզիդենտ Հաճախորդներից գանձվում է սահմանված սակագների կրկնապատիկը:

Էսքրոու հաշիվ [1] (այսուհետ՝ նաև Հաշիվ) ծառայության մատուցման սակագներ և պայմաններ	
Գործարքի տեսակ	**Սակագին և Պայման**
Հաճախորդների խումբ	Էսքրոու հաշվետեր՝ Գնորդ - ֆիզիկական անձ Վաճառող - ֆիզիկական կամ իրավաբանական անձ, անհատ ձեռներեց
Հաշվի բացման և սպասարկման միանվագ վճար [2]	Հաշվին մուտքագրվող գումարի 0.25%, նվազագույնը՝ 50,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 300,000 ՀՀ դրամ
Հաշվի արժույթ	Արժույթը պայմանավորված է գործարքի արժույթով
Հաշվի ժամկետ	ժամկետը պայմանավորված է Էսքրոու գործարքի ժամկետով
Հաշվի օրական մնացորդի վրա կիրառվող տարեկան անվանական տոկոսադրույքի չափ	0% (*տարեկան տոկոսային եկամտաբերությունը հավասար է 0%)*
Պայմանների փոփոխություն	20,000 ՀՀ դրամ՝ Պայմանագրում պայմանների փոփոխություն կատարելիս յուրաքանչյուր լրացուցիչ համաձայնագիր կնքելու համար
Էսքրոու հաշվի պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման ստուգում Բանկի կողմից [3]	50,000 ՀՀ դրամ
Հաշվի փակում	Անվճար՝ փակվում է Բանկի կողմից Էսքրոու Պայմանագրի ավարտից հետո
Հաշվով կատարվող գործառնությունների տեսակներ [4]	
Հաշվին գումարի համալրում [5]	**Կանխիկի մուտքագրում** - տվյալ ծառայության համար Բանկի սահմանած սակագնով
	Անկանխիկ - փոխանցումներ ստանալով միևնույն հաճախորդի հաշիվների միջև կամ այլ հաճախորդի հաշվից(նաև այլ բանկից) - տվյալ ծառայության համար Բանկի սահմանած սակագնով
Հաշվից գումարի ելքագրում	**Կանխիկի ելքագրում** - տվյալ ծառայության համար Բանկի սահմանած սակագնով
	Անկանխիկ - փոխանցումներ ուղարկելով միևնույն հաճախորդի հաշիվների միջև կամ այլ հաճախորդի հաշվին(նաև այլ բանկ) - տվյալ ծառայության համար Բանկի սահմանած սակագնով

[1] **Էսքրոու հաշիվը մեկանգամյա գործարքի կատարման համար նախատեսված բանկային հատուկ հաշիվ է, որը նախատեսված է ապրանքների, ծառայությունների, գույքերի և այլ արժեքների առքուվաճառքի գործարքների կատարման դիմաց վճարման ապահովման համար.**
- Բանկը գումարը վճարում է Էսքրոու պայմանագրում նշված կողմին՝ ստանձնած պարտավորությունների կատարման փաստաթղթային ապացույցի ներկայացման դեպքում: Եթե պայմանագրի կողմերից մեկը ստանձնած պարտավորությունները չի կատարում ժամկետին կամ կատարում է ոչ պատշաճ, էսքրոու հաշվի գումարը վերադարձվում է գումարը մուտքագրած կողմին,
- էսքրոու հաշիվների բացման, վարման և սպասարկման վերաբերյալ կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են համապատասխան պայմանագրով:

Բանկը երաշխավորում է.
✓ էսքրոու հաշվին միջոցների դեպոնացումը
✓ էսքրոու հաշվից միջոցների ժամանակին վճարումը շահառուին՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման փաստաթղթային հիմնավորման(*ներկայացման*) դեպքում:

Էսքրոու հաշիվները չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել հաճախորդի պարտավորությունների դիմաց՝ բացառությամբ, եթե.
- կապված են ՀՀ օրենսդրությամբ, նորմատիվ իրավական ակտերով, Պայմանագրով և Կարգով նախատեսված ուղղություններից, դեպքերից, պայմաններից կամ գործառնություններից բխող պարտավորությունների հետ, կամ
- այդ միջոցները էսքրոու հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործելու համար Բանկի կողմից հաճախորդին վճարված տոկոսներից ձևավորված միջոցներ են, կամ
- այդ միջոցները Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 190 հոդվածի 5-րդ կետով նախատեսված գույք են, կամ
- լրացել է Պայմանագրով սահմանված ժամկետը:

Էսքրոու հաշվի միջոցները երաշխավորվում են Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին ՀՀ օրենքի համաձայն:

[2] **Էսքրոու հաշվի բացումը և սպասարկումը ներառում է**.
- Էսքրոու քործարքի կողմերի համաձայնությամբ Բանկում Էսքրոու քործարքի համար հաշվի բացում,
- էսքրոու հաշվին Գնորդի միջոցների դեպոնացում(*միջոցների սառեցում*),
- պարտավորությունների կատարման փաստաթղթային հավաստում,
- Էսքրոու գումարի վճարում կամ վերադարձ Կողմերին՝ Էսքրոու քործարքի պայմանների կատարման կամ չկատարման դեպքում
- Վճարը գանձվում է հաշվին յուրաքանչյուր մուտքի ժամանակ և ենթակա չէ վերադարձման, եթե էսքրոու հաշվով գործարքի կողմերը հերաժարվում են գործարքից:

[3] Սույն կետով սահմանված վճարը գանձվում է եթե Էսքրոու պայմանագրի ժամկետի ավարտին Կողմերից որևէ մեկը Բանկ է ներկայացնում Էսքրոու հաշվի պայմանագրով սահմանված պայմանագրային պարտավորությունների կատարումը հավաստող փաստաթղթեր, որոնց իսկությունը ստուգվում է Բանկի կողմից:

[4] Սույն սակագներով չկարգավորվող դրույթները կարգավորվում են Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագներով, իսկ այն միջնորդավճարներ, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ:

[5] Էսքրոու հաշվին մուտքագրվում է ապրանքի, ծառայության, շարժական կամ անշարժ գույքի, իրավունքների կամ այլ արժեքների ձեռքբերման համար նշված գումարը կամ նշված գումարի մի մասը՝ որպես գործարքի կատարման երաշխիք: